

Ստրասբուրգ 16 սեպտեմբերի 2005թ.

Կարծիք # 313/2004

CDL(2005)054rev

**Ժողովրդավարություն օրենքի միջոցով Եվրոպական հանձնաժողով
(Վեներտիկի հանձնաժողով)**

Վերջնական կարծիքի նախագիծ

**Հայաստանի Հանրապետությունում
Սահմանադրական բարեփոխման վերաբերյալ**

հիմնված

**Պարոն Վլադ Կոնստանտինեսկուի (փորձագետ, Ֆրանսիա)
Պարոն Այվերս Էնժինսի (անդամ, Լատվիա)
Պարոն Կաարլո Թուորիի (անդամ, Ֆինլանդիա)**

մեկնաբանությունների վրա

I. Ներածություն

1. 2005 թվականի հունիսին հանձնաժողովն ընդունեց Հայաստանում սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ (CDL-AD(2005)016) իր երկրորդ միջանկյալ կարծիքը: Այն եկավ այն եզրահանգման, որ սահմանադրական փոփոխությունները, ինչպես ընդունվել է առաջին ընթերցմամբ, պահանջել է կարևոր փոփոխություններ իշխանությունների տարանջատման, դատական համակարգի անկախության և Երևանի քաղաքապետի նշանակման ձևի ոլորտներում:
2. Ինչպես նախօրոք համաձայնեցված է եղել, 2005 թվականի հունիսի 17-ին Հայաստանի իշխանությունները ներկայացրեցին սահմանադրական փոփոխությունների վերամշակված տարբերակը հանձնաժողովի աշխատանքային խմբին:
3. 2005 թվականի հունիսի 23-24-ին Ստրասբուրգում կայացավ նիստ, որտեղ Հայաստանի իշխանությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և Հանձնաժողովի աշխատանքային խումբը, կազմված պարոն Էնձինսից, Թուրիից և Վլադ Կոնստանտինեսկուից, քննարկեց այս վերամշակված փոփոխությունները դրանք բարեփոխելու նպատակով: Այս նիստի արդյունքում, այն որոշակի սկզբունքները, որոնք պետք է ուղեցույց լինեն հետագա սահմանադրական աշխատանքներին, համաձայնվեցին (CDL(2005)052):
4. 2005 թվականի հուլիսի 7-ին Հայաստանի իշխանությունները ներկայացրեցին Սահմանադրական փոփոխությունների հետագա վերամշակված տարբերակը (CDL(2005)058):
5. Հանձնաժողովի աշխատանքային խումբը պատրաստեց սահմանադրական փոփոխությունների այս տարբերակի գնահատականը և ուղարկեց այն Հայաստանի իշխանություններին 2005 թվականի հուլիսի 21-ին:
6. 2005 թվականի սեպտեմբերի 1-ին այս փոփոխություններն ընդունվեցին Ազգային ժողովում երկրորդ ընթերցմամբ: Դրանք ներկայացվեցին հանձնաժողովին 2005 թվականի սեպտեմբերի 9-ին իրենց վերջնական տարբերակով:
7. Սահմանադրական փոփոխությունների հետ կապված ներկա կարծիքը, ինչպես ընդունվել է երկրորդ ընթերցմամբ, նախապատրաստվել է աշխատանքային խմբի կողմից և ներկայացվել է Հայաստանի իշխանություններին 2005 թվականի սեպտեմբերի 19-ին: Այն այնուհետև դրական գնահատվեց հանձնաժողովի կողմից իր ...լիազումար նիստում (...):

II. Առաջին ընթերցմամբ ընդունված վերամշակված սահմանադրական փոփոխությունների նախագծի վերլուծությունը

Ա. Նախնական դիտողություններ

8. Ներկա դիտողությունները միայն վերաբերում են այն ոլորտներին, որոնք հատկապես քննարկվել են 2005 թվականի հունիսի 23-24-ի նիստերին, և որոնք ամփոփվել են (CDL(2005)052) փաստաթղթում: Այն մշակվելիս, աշխատանքային խումբը նպատակ է ունեցել հասնելու լուծումների՝ թույլ տալով Հայաստանում ժողովրդավարական հաստատությունները գործունակ դարձնել:

9. Սահմանադրության այլ բնագավառներ, որոնք հանձնաժողովի կողմից չի նշվել այս կարծիքում, սակայն նշվել է նախորդ կարծիքներում¹, կարող է արժանանալ քննարկման Հայաստանի իշխանությունների, ընդդիմադիր ուժերի և քաղաքացիական հասարակության շրջանում: Իսկապես, հանձնաժողովը կարծում է, որ կարևոր է, որ վերջնական տեքստի քննարկումը հրապարակայնորեն անցկացվի Հայաստանում բաց և թափանցիկ ձևով:

Բ. Մարդու իրավունքներ

Մարդու իրավունքների պաշտպան

10. Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության սահմանադրական հիմքը ներկայացնում է մի կարևոր քայլ, հաստատելով Հայաստանում մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը:

11. Այժմ այն որոշակիորեն նախատեսված է 83.1 հոդվածի պարբերություն 1-ում, որ մարդու իրավունքների պաշտպանը պետք է ընտրվի պատգամավորների մեծամասնության 3/5-ի կողմից, ինչպես ներկայումս ապահովում է մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքում: Մարդու իրավունքների ամփոխարինելի լինելու սկզբունքը նաև ակնհայտորեն նշված է նույն հոդվածի պարբերություն 3-ում:

Լրատվամիջոցների ազատություն, անկախություն և բազմակարծություն

12. Առաջարկված Սահմանադրությունը 83.2 հոդվածում այժմ սահմանում է Ռադիոյի և հեռուստատեսության Ազգային հանձնաժողովի (ՌՀԱՀ) անդամների նշանակման ձևը:

13. Ռադիոյի և հեռուստատեսության Ազգային հանձնաժողովի անդամները այլևս չեն նշանակվում նախագահի կողմից 55.5 հոդվածի ընդհանուր կետով, սակայն նշանակվում են 6 տարով, հետևյալ կերպ.

¹ CDL(2000)102rev., CDL-INF(2001)017, CDL-AD(2004)044 և CDL-AD(2005)016)

- Ազգային ժողովի կողմից 1/2-ը և
- Նախագահի կողմից 1/2-ը:

14. Հանձնաժողովը ողջունում է այս լուծումը, որը ներկայացնում է, անկասկած, մի քայլ առաջ դեպի ՌՀԱՀ-ի անկախություն: Հանձնաժողովը պահանջում է անհրաժեշտությունը և Ազգային ժողովի, և Նախագահի համար, թեկնածուների ընտրության թափանցիկ և չափանիշներով հիմնավորած ընթացակարգ: Այն մատնանշում է մասնավորապես, անդամներին, եթե ՌՀԱՀ-ն չպետք է լինի կազմված քաղաքական կուսակցությունների ակտիվ անդամներից:

15. Հանձնաժողովը նաև ցանկանում է դիմել հասարակական ծառայության եթեր արձակող կազմակերպությունների ղեկավարության վարչության անդամներին, որպեսզի նրանք նշանակվեն այնպես, որ խուսափեն «ցանկացած քաղաքական կամ այլ միջամտության»² վտանգից: Այս առումով, Հանրային Հեռուստատեսության և Ռադիոյի խորհրդի (ՀՀՌԽ) բոլոր նշանակումները Հանրապետության Նախագահի կողմից դիտվել է պրոբլեմատիկ, և նշանակման գործընթացի անհրաժեշտությունը, եթե Նախագահի այս իշխանությունը պետք է պահպանվի, լինի բաց և թափանցիկ և չլինի բաց քաղաքական ոչ իրավասու կիրառելի, ընդգծվել է:³ Հանձնաժողովը նշում է այս առումով, որ ՀՀՌԽ-ն, համաձայն Հայաստանի իշխանությունների ներկայացրած տեղեկության, համատեղ բաժնետիրական ընկերություն է: Սրանից հետևում է, որ դրա ղեկավար վարչության անդամները «պետական պաշտոնյաներ» չեն և կարիք չկա, որ նրանց նշանակի Հանրապետության Նախագահի կողմից համաձայն Սահմանադրության 55 հոդվածի պարբերություն 5-ի: Այլ տարբերակներ կարող է, իսկապես, նախընտրելի լինել, ինչպես օրինակ, նշանակումը քաղաքացիական հասարակության և արհեստավարժ մարմինների կողմից:

16. Հանձնաժողովն ընդգծում է այս հարցի կարգավորման նշանակությունը, համաձայն կիրառելի եվրոպական չափանիշների: Այն առաջարկում է, հետևաբար, որ նշված օրենսդրությունը պետք է համապատասխանեցվի եվրախորհրդի օգնությամբ:

² Տես, մասնավորապես, Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված Առաջարկ # R(96)10-ը հանրային ծառայության անկախության երաշխավորության մասին, ընդունված Նախարարների կոմիտեի կողմից 1996 թվականի սեպտեմբերի 11-ին: Տես նաև՝ Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված Առաջարկ Rec(2000)23-ը եթերի սեկտորի համար կարգավորող իշխանությունների անկախության և գործառույթների մասին, ընդունված 2000թվականի դեկտեմբերի 20-ին:

³ Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի եթերի մասին օրենքի վերլուծությունը և մեկնաբանությունները, ընդունված 2000 թվականի հոկտեմբերին և փոփոխված 2001 թվականին, Հեռուստատեսության և ռադիոյի Ազգային խորհրդի նորմերը, ընդունված 2002 թվականի հունվարի 11-ի օրենքով (2002)016rev, 2002 թվականի հունիսի 26-ին) և իրականացված եվրախորհրդի Լրատվամիջոցների, Մարդու իրավունքների տնօրինության բաժնի կողմից իրականացված:

Գ. Իշխանությունների տարանջատումը

Նախագահի անձեռնմխելիությունը

17. Ինչ վերաբերում է Նախագահի անձեռնմխելիությանը, հանձնաժողովը նշում է հավանություն տալով, որ 56.1 հոդվածի պարբերություն 2-ը լիովին արտացոլում է և Նախագահի ոչ իրավասու լինելու սկզբունքը կապված այն գործողությունները, որոնք առաջանում են նրա նախագահական պարտականություններից մանդատի ժամանակ և հետո, և անձեռնմխելիություն հետապնդումից մանդատի ժամանակ այն գործողությունների համար, որոնք առաջանում են նրա նախագահական պարտականություններից:

Աժ արտահերթ նիստեր և նստաշրջաններ

18. Հանձնաժողովը նշում է հավանությամբ, որ վերանշակված Հոդված 70-ը՝ արտահերթ նստաշրջանների և նիստերի մասին այժմ հստակորեն նախատեսում է, որ Ազգային ժողովի Նախագահն է, որ պետք է գումարի խորհրդարանական նստաշրջան կամ նիստ Հանրապետության Նախագահի կամ պատգամավորների առնվազն 1/3-ի կամ Կառավարության նախաձեռնությամբ:

Կառավարության կազմավորումը

19. Հանձնաժողովը ողջունում է վերանշակված դրույթները Կառավարության կազմավորման մասին, որն այժմ ապահովում է երաշխիքներ Հայաստանում հիմնական սահմանադրական մարմինների միջև անփոխարինելի հավասարակշռության համար:

20. Նոր 55 հոդվածի պարբերություն 4-ի համաձայն, Հանրապետության Նախագահը պետք է նշանակի Վարչապետ այն անձին, որը վայելում է պատգամավորների մեծամասնության վստահությունը: Երկրորդ մասի առաջին նախադասության հետևյալ արտահայտության՝ «*եթե հնարավոր չէ*, այն անձը, որը վայելում է *հարաբերական մեծամասնության* վստահությունը» իմաստը պարզ չէ և հետագա ճիշտ ընթացակարգը պետք է վերծանվի:

21. Այժմ վարչապետները կարող են միայն ազատվել Ազգային ժողովի կողմից անվստահության քվեով: Մյուս կողմից, որպես փոխզիջման լուծում, Նախագահը իրավունք ունի ներկայացնել Ազգային ժողովին անվստահության միջնորդագիր Կառավարությունում (Նոր Հոդված 84, պարբերություն 2):

22. Հունիսի 23-24-ի նիստերին քննարկվեց անվստահության քվեի ներկայացնելու հնարավորությունը: Հանձնաժողովի աշխատանքային խմբի անդամները համարեցին, որ այսպիսի մեխանիզմն, ընդհանուր առմամբ, նպաստում է կառավարության կայունությանը, և որպես այդպիսին, այն կարող է օգտակար լինել:

23. Ինչ վերաբերում է Նախագահի իրավասությանը՝ լուծարելու Ազգային ժողովը «տեխնիկական» պատճառներով, վերամշակված 74.1 հոդվածի պարբերություն 1-ն այժմ ճիշտ կերպով ապահովում է Ազգային ժողովի Նախագահի կամ Վարչապետի ներգրավումը:

24. Ինչ վերաբերում է Կառավարության կազմին, Հանձնաժողովը նշում է հավանությամբ, որ այն պետք է ամրագրվի օրենքով:

Արտաքին քաղաքականություն

25. Նոր 85 հոդվածն այժմ հստակորեն նախատեսում է, որ Կառավարությունը պետք է «որոշի և իրականացնի» Հայաստանի արտաքին քաղաքականությունը Հանրապետության Նախագահի հետ համատեղ: Փաստորեն, Հանրապետության Նախագահի լիազորությունների մասին հոդված 55-ը պետք է ավելի հստակորեն ապահովի, որ Նախագահը ավելի շուտ «որոշում է և իրականացնում արտաքին քաղաքականությունը Կառավարության հետ համատեղ», քան թե «իրագործում է դրա ընդհանուր հսկողությունը»:

Կառավարության նիստերը

26. Հանձնաժողովը գոհունակությամբ նշում է, որ նոր 86 հոդվածի պարբերություն 2-ն ակնհայտորեն հաստատում է, որ Նախագահը կարող է գումարել և նախագահել Կառավարության նիստերը միայն *կապված արտաքին քաղաքականության, պաշտպանության և պետական անվտանգության հարցերի հետ*:

Դ. Դատական համակարգի անկախությունը

Գլխավոր Դատախազ

27. Համաձայն վերամշակված 55 հոդվածի պարբերություն 9-ի, Գլխավոր Դատախազի տեղակալների նշանակումը և ազատումը պետք է արվի Գլխավոր Դատախազի առաջարկով:

Դատավորների նշանակումը և ազատումը/Արդարադատության խորհրդի կազմը

28. Եվրախորհրդի Նախարարների կոմիտեի դատավորների անկախության, արդյունավետության և նրանց դերի մասին առաջարկ # R(94)12-ում ասվում է:

«Այն իշխանությունը, որը որոշում է կայացնում դատավորների ընտրության և կարիերայի մասին, պետք է լինի կառավարությունից և վարչակազմից անկախ: Դրա անկախությունը երաշխավորելու նպատակով, օրենքները պետք էրաշխավորեն, որ օրինակ, նրա անդամներն ընտրվում են դատական համակարգի կողմից և, որ իշխանություններն են որոշում ընթացակարգային

կանոնները: Սակայն, որտեղ որ սահմանադրական կամ իրավական դրույթները թույլ են տալիս դատավորներին նշանակվելու Կառավարության կողմից, այնտեղ պետք է լինեն երաշխիքներ հավաստիանալու, որ դատավորներ նշանակվելու ընթացակարգերը թափանցիկ են և անկախ գործնականում և, որ որոշումները ազդեցություն չեն կրի որևէ այլ պատճառներով, այն կլինի միայն ելնելով վերը նշված օբյեկտիվ չափորոշիչներից:»

29. Դատավորների Կանոնադրության Եվրոպական խարտիայում ասվում է.

«Ամեն մի որոշման առումով, որն ազդում է դատավորի ընտրության, հավաքագրման, նշանակման, պաշտոնեական առաջխաղացմանը կամ պաշտոնավարման դադարեցման վրա, կանոնադրությունը նախատեսում է գործադիր և օրենսդրական իշխանություններից անկախ իշխանության միջամտությունը, որի ընթացքում նրանցից առնվազն կեսը, որոնք պաշտոնավարում են, դատավորներ են ընտրված իրենց պերերի կողմից, հետևելով դատական համակարգի ամենալայն իրավասությունը երաշխավորող մեթոդներին»:

30. Համաձայն Եվրոպական խարտիայի բացատրական հուշագրի, անկախ իշխանության «միջամտություն» տերմինը նշանակում է կարծիք, առաջարկ, ինչպես նաև իրական որոշում:⁴

31. Առաջարկվող սահմանադրության 94.1 հոդվածում Արդարադատության խորհրդի կազմը սահմանվում է հետևյալ կերպ՝ «ինը դատավորներ /չպետք է ասվի «մինչև» ինը դատավոր, սակայն, ըստ Հայաստանի իշխանությունների սա թարգմանական սխալ է/, ովքեր հինգ տարի ժամկետով փակ զադտնի քվեարկությամբ ընտրվել են Հայաստանի Հանրապետության Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, Հանրապետության Նախագահի կողմից նշանակված երկու իրավաբան գիտնական և երկու իրավաբան գիտնական՝ նշանակված Ազգային ժողովի կողմից»:

32. 94.1 նոր հոդվածի 3-րդ պարբերության համաձայն Դատական խորհրդի նիստերն առանց քվեարկության իրավունքի նախագահում է Վճռաբեկ դատարանի նախագահը:

33. Հանձնաժողովի կարծիքով Դատական խորհրդի կազմը համապատասխանում է վերը հիշատակված Եվրոպական չափանիշներին:

34. Հունիսի 23-24-ին տեղի ունեցած նիստի ժամանակ կայացվել է համաձայնություն, ըստ որի, Հանրապետության Նախագահը որևէ մեկին կարող է նշանակել կամ ազատել միայն Դատական խորհրդի առաջարկության

⁴ Տես՝ Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհուրդ (CCJE/ԵԴԽԽ), Կարծիք # 1 (2001) նորմերի մասին, որոնք վերաբերում են Դատական համակարգի անկախությանը և դատավորների անջարժունակությանը, պարբերություն 39:

կամ եզրակացության հիման վրա: Հարկավոր է այս կարևոր սկզբունքն ավելի հստակ կերպով արտագույել 55 հոդվածի 11-րդ պարբերության մեջ:

35. «Արդարադատության խորհրդի առաջարկության կամ եզրակացության հիման վրա» արտահայտությունը պետք է հստակ կերպով վերաբերի ցանկացած որոշման, որն առնչվում է դատավորի նշանակմանը, պաշտոնեական առաջխաղացմանը կամ պաշտոնավարման դադարեցմանը: «Կարող է դադարեցնել նրանց լիազորությունները» արտահայտությունը պետք է փոխարինվի «պետք է դադարեցնի նրանց լիազորությունները» արտահայտությամբ: 11-րդ պարբերության մեջ լրացուցիչ կետով պետք է հստակ կերպով նախատեսվի, որ Նախագահը Արդարադատության խորհրդի առաջարկության կամ եզրակացության հիման վրա «պետք է առաջ քաշի այն դատավորներին, ովքեր գտնվում են մասնագիտական առաջխաղացման ցուցակում»:

36. Հանձնաժողովն ընդգծում է այս հարցը եվրոպական կիրառելի չափանիշներին համապատասխան ձևով կարգավորելու կարևորությունը, ուստի այն առաջարկում է, որպեսզի ի լրումն 55 հոդվածի 11-րդ պարբերության վերաշարադրման, Հայաստանի իշխանությունները համապատասխան օրենքը նախապատրաստեն կամ վերանայեն եվրախորհրդի աջակցությամբ:

Տեղական ինքնակառավարում

37. «Տեղական ինքնակառավարման մասին» 7-րդ գլխում կատարված փոփոխությունները համապատասխանում են նախորդ կարծիքում հայտնված հանձնաժողովի կատարած առաջարկություններին: Այն սկզբունքը, որի համաձայն, Երևանը համայնք է, ուստիև՝ տեղական ինքնակառավարման միավոր, հստակ կերպով նշված է: Նոր՝ 108 հոդվածում հաստատվում է այն սկզբունքը, որ Երևանի քաղաքապետը պետք է ընտրվի, չնայած օրենքը կարող է նախատեսել անուղղակի ընտրություններ, որոնք, ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայի, օրինական են: Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մարմինների կազմավորման և դրանց գործունեության մասին մանրամասն դրույթները կհստակեցվեն օրենքով: Եթե քաղաքապետի անուղղակի ընտրություններն ավագանու կողմից նախատեսվեն որպես լուծում, տեղին կլինի դա նշել 108 հոդվածում:

Սահմանադրության փոփոխությունները

38. Վերամշակված 113 հոդվածի համաձայն, որպեսզի սահմանադրական բարեփոխումների հանրաքվեն համարվի կայացած, նախկին 1/3-ի փոխարեն իրենց քվեն պետք է հստակ կերպով արտահայտեն գրանցված ընտրողների 1/4-ը: Հանձնաժողովի տեսակետն այն է, որ այս պարզեցումը ողջունելի է

Անցումային Դրույթներ

39. Հանձնաժողովը կարծում է, որ սահմանադրական նոր դրույթները պետք է որքան հնարավոր է շուտ ուժի մեջ մտնեն: Ընտրովի մարմինների մանդատին վերաբերող դրույթները / 63 հոդվածի 2-րդ պարբ. և 107 հոդվածի 1-ին պարբ./ ակնհայտորեն պետք է սպասեն մինչև սպառվի ներկայիս մարմինների մանդատի ժամկետը:

Եզրակացություններ

40. Վերանշակված սահմանադրական փոփոխություններն, անկասկած, Վենետիկի հանձնաժողովի կողմից նախկինում դիտարկված նախագծերի համեմատությամբ բարելավում են: Հանձնաժողովի կարծիքով սույն տեքստի հիման վրա հաջող սահմանադրական հանրաքվեն կարող է լավ հիմք դառնալ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, ժողովրդավարության և օրենքի գերակայության բնագավառներում եվրոպական չափանիշներին Հայաստանի սահմանադրության համապատասխանությունն ապահովելու և կարող է ճանապարհի հարթել եվրոպային հետազայում ինտեգրվելու համար: Հանձնաժողովը գնահատում է Հայաստանի իշխանությունների ջանքերն ու բարի կամքը:

41. Անշուշտ, կարևոր է, որպեսզի վերջնական տեքստի քննարկումն ընդդիմադիր ուժերի և Հայաստանի քաղաքացիական հասարակության հետ տեղի ունենա բաց և թափանցիկ ձևով: Պետք է գտնվի հնարավորինս լայն քաղաքական կոնսենսուս:

42. Հաջորդ հիմնական մարտահրավերը կլինի հանրաքվեի պատշաճ քարոզարշավի կազմակերպումը, որի արդյունքը կլինի Հայաստանի նոր Սահմանադրության ընդունումը: Հանձնաժողովը քաջալերում է Հայաստանի իշխանություններին՝ ամեն ինչ անել 2005թ. նոյեմբեր ամսին սահմանադրական բարեփոխումների հաջողությունն ապահովելու համար: Բարեփոխումները հայ ժողովրդին պետք է ներկայացվեն ճիշտ ժամանակին և ճիշտ ձևով: Այդ նպատակով շատ կարևոր է, որպեսզի հանրաքվեի քարոզարշավը զանգվածային լրատվամիջոցների կողմից լուսաբանվի արդար, ճշգրիտ և լայնամասշտաբ ձևով:

43. Հանձնաժողովը ցանկանում է ընդգծել, որ սահմանադրական բարեփոխումների գործընթացի հաջողությունը կախված է Հայաստանի քաղաքական դասակարգից և վերջինիս հասունության հայելին է: Ոչ միայն մեծամասնությունը, այլ նաև ընդդիմությունը պետք է ապացուցեն փոխզիջումների գնալու իրենց կարողությունը, որպեսզի հասնեն իրագործելի քաղաքական միջավայրի, որը կարող է հանգեցնել ժողովրդավարության:

44. Անշուշտ, լավ սահմանադրությունը դեպի ժողովրդավարություն առաջին վճռորոշ քայլն է, սակայն դա բավարար չէ: Հայաստանի իշխանությունները պետք է կառուցեն այնպիսի քաղաքական և սոցիալական համատեքստ, որը հնարավորություն կընձեռի կառավարման նորաստեղծ համակարգի արդյունավետ իրականացման համար: Այդ վճռորոշ գործուն հանձնաժողովը պատրաստական է նրանց աջակցել: